— Ինչու՛, — հարցրեց վերակացուն, աւելի բարկանալով:

— Նրա համար, որ ես ծիծաղեցրի նրան, նա մեղք չունի, — պատասխանեց Կարօն:

— Ուրեմն, երկուսդ չոքեցէք, — ասաց վերակացուն, կրկին անկիւնը ցոյց տալով:

— Ոչ ես կը չոքեմ, ոչ՝ նա, — պատասխանեց Կարօն վդովուած ձայնով:

Ես նկատեցի, Կարօն գունաթափուեցաւ, նրա ձեռքերը սկսեցին դողդողալ եւ աչքերը լցուեցան արիւնով. — դրանք նրա կատաղութեան նշաններն էին: Չգիտեմ, վերակացուն այլեւս ինչ խօսեց, միայն այն տեսայ, որպէս վագրը թռչում է փղի պարանոցի վրայ եւ իր սուր ճանկերով բռնում է նրա կոկորդից, նոյնպէս եւ Կարօն բռնեց վերակացուի վզից, եւ մի քանի պտոյտներից յետոյ, ահագին Գոլիաթը գլորուեցաւ գետին... Կարօյի երկաթէ մատները սեղմուեցան նրա կոկորդի վրայ եւ ողորմելին սկսեց խռխռալ... յետոյ թռչելով շնչասպառ Խալֆայի կուրծքի վրայ Կարօն ասաց.

— Տե՛ս, ես այստեղ կչոքեմ...

Ամբողջ դասատունը հաւաքուելով, հազիւ կարողացան ազատել թշուառ Խալֆային Կարօյի ճանկերից, որը այնուհետեւ մինչեւ կէս ժամ ուշաթափ մնաց:

Կարօն առանց մի խօսք խօսելու, նոյն րոպէում թողեց դպրոցը եւ կրկին չվերադարձաւ այնտեղ...

Ժ. ԶԷՆՔԵՐ

Թողնելով դպրոցը, այնուհետեւ Կարօն վարում էր լի փորձանքներով թափառական կեանք: Շատերը նրան համարում էին ցնորած: Լինում էր, շատ անգամ Կարօյի տատը, բոլորովին յուսահատ, բոլորովին շոարած, մութ գիշերային պահուն, գալիս էր ինձ մօտ. — «Ֆարհատ, էլի չէ երեւում նա»... ասում էր խեղճ պառաւը եւ թափում էր աչքերից ջերմ արտասուքը:

Ես գնում էի որոնելու նրան: Որտե՞ղ ասես չէի պտռում, եւ գտնում էի շատ անգամ պառկած բարձր, սարսափելի քարաժայռի վրայ, եւ կամ լուռ մտախոհութեան մէջ, նստած հեղեղատի ափի մօտ, յափշտակուած էր լինում, աստուած գիտէ, որպիսի՛ ցնորքներով...

Ի՞նչ էր նրա դարդը, ի՞նչ էր, որ դուրս էր հալածում անբախտ պատանուն մարդկային բնակութիւնից: — Ես չգիտէի, միայն նկատում էի, որ նա տանջւում էր ներքին, հոգեկան անհանգստութեամբ, եւ կարծես, իր վշտերը